ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԵՀԳՄ 2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «3» հուլիս 2023

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Ֆեդերացիա), ի դեմս Ֆեդերացիայի նախագահ Արա Մեհրաբյանի, որը գործում է Ֆեդերացիայի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը (այսուհետև՝ Որոշում) և առաջնորդվելով Դպրոցականների միջազգային մարզական ֆեդերացիայի կանոնդարությամբ (այսուհետև՝ Կանոնադրություն), Որոշման 1148. «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» բյուջետային ծրագրի 11014. «ՀՀ դպրոցականների աշխարհի, Եվրոպայի և համաշխարհային գիմնազիադայի մասնակցության և ՀՀ տարածքում կազմակերպման ապահովում» միջոցառման (այսուհետև՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Պետական մարմինը Ծրագրի իրականացման նպատակով Ֆեդերացիային հատկացնում է Որոշմամբ նախատեսված մինչև 29589860 (քսանինը միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար ութ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ Ծրագրով կամ Պայմանագրով սահմանված չափաքանակներով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր միջոցառման (այսուհետև՝ միջոցառում) ֆինանսավորման համար Ֆեդերացիայի կողմից ներկայացված նախահաշիվը, իսկ Ֆեդերացիան պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Ֆեդերացիայի կողմից իրականացվելիք միջոցառումները և նախահաշիվը ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում և Հավելված N 2-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ուսումնասիրել և ստուգել Ֆեդերացիայի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. Ֆեդերացիայից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն Պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. Որոշմամբ և Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1. առանց հիմնավոր պատճառի Ֆեդերացիան ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2. Ֆեդերացիան երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (Պայմանագրով կամ Կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

2.1.5. հետևել միջոցառումների կազմակերպման, անցկացման կամ մասնակցության ընթացքին,

2.1.6. պարբերաբար վերլուծել Ֆեդերացիայի կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա ծրագրերի բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ,

2.1.7. հետ պահանջել միջոցառման իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների և փաստացի կատարված ծախսերից առաջացած տնտեսումը,

2.1.8. Պայմանագրի 2.4-րդ կետի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ֆեդերացիայից հետ պահանջել հատկացված ֆինանսական միջոցները կամ դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.9. ամփոփել և գնահատել Ֆեդերացիայի կողմից ներկայացված տարեկան մարզական գործունեության Ծրագրի կատարման արդյունավետությունը,

2.1.10. իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.2. Ֆեդերացիան իրավունք ունի՝

2.2.1. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը,

2.2.2 Պետական մարմնից պահանջել վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են Ֆեդերացիային լիարժեք իրականացնելու իր գործունեությունը Պայմանագրի շրջանակներում,

2.2.3. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.2.4 իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Ծրագրով նախատեսված դեպքերում իր և Ֆեդերացիայի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել Ֆեդերացիային, այդ թվում՝ Ֆեդերացիային ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական մարմինների հետ,

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. միջոցառումների կազմակերպման, անցկացման կամ մասնակցության նպատակով պետական աջակցության միջոցների շրջանակում, Պետական մարմնի կողմից մշակված միջոցառման ծախսերի նախահաշվի սահմաններում, Ֆեդերացիային ապահովել համապատասխան ֆինանսական միջոցներով,

2.4. Ֆեդերացիան պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով կամ Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. Պետական մարմնին անհապաղ հայտնել Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել Ծրագրի շրջանակում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.5. Պայմանագրով սահմանված կարգով յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում Պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տարեկան հաշվետվություն, (Հավելված 3),

2.4.6. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Ֆեդերացիան պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝** պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.9. հատկացված միջոցներն օգտագործել Պայմանագրի 1.2-րդ կետում նշված N 1 Հավելվածով նախատեսված միջոցառումների իրականացման համար՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,

2.4.10. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել Պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Ֆեդերացիայում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.11. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Պետական մարմնին վճարել տույժ՝ Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով սահմանված կարգով և չափով:

2.4.12. Պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան Պայմանագրի 6.2-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20-երորդ օրը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Ֆեդերացիային տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Ֆեդերացիայից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված գումարը Պետական մարմինը փոխանցում է Ֆեդերացիային համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշմամբ սահմանված եռամսյակային համամասնությունների:

4.2. Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները Ֆեդերացիայի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.3. Պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել Պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Ֆեդերացիան պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Ֆեդերացիայի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Ֆեդերացիային չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Ֆեդերացիան Պետական մարմնին վճարում է տույժ՝ Պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տուգանքն ու տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման նպատակով ֆեդերացիային վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի կամ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

6.2. Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սեպտեմբերի 20-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ

դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի Կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ **ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն**	**ՖԵԴԵՐԱՑԻԱ.** **«Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ**
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2	Ք. Երևան, Ագաթանգեղոսի 13
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030971 ՀՎՀՀ 02698732	«Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510022842720100 ՀՎՀՀ 02700421
Գլխավոր քարտուղար՝ _____ Հ. Հակոբյան /ստորագրություն/ Կ.Տ	Նախագահ՝ _____ Մ. Մեհրաբյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
2023 թ. հուլիսի 3-ին կնքված
N **ԱԵՀԳՄ 2023** պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	«Դպրոցականների համաշխարհային Գիմնազիադայի մասնակցության և ՀՀ տարածքում կազմակերպման ապահովում» 1. Դպրոցականների շախմատ 2. Բռնցքամարտ 3. Հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտ	Դպրոցականների համաշխարհային Գիմնազիադայի շախմատ, բռնցքամարտ և ըմբշամարտի մասնակցության ապահովում	Դպրոցական տարիքի երեխաների մարզաձևերի զարգացում	**Արդյունքները** Դպրոցական տարիքի երեխաների տարբեր մարզաձևերի զարգացում և մրցանակային տեղերի գրավում: **Գնահատման չափանիշները** Վերոհիշյալ ցուցանիշների վերլուծություն նախորդ տարիների ցուցանիշների համեմատությամբ	2023 թ. սեպտեմբերի 1-ը	29 589 860
	Ընդամենը					**29 589 860**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030971
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ՖԵԴԵՐԱՑԻԱ
«Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ

ք. Երևան, Ագաթանգեղոսի 13

«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510022842720100
ՀՎՀՀ 02700421

Նախագահ՝
_____ Ա. Մեհրաբյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
2023 թ. հուլիսի 3-ին կնքված
N **ԱԵՀԳՄ 2023** պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Բրազիլիայի Ռիո Դե Ժաներիո քաղաքում կայանալիք դպրոցականների Համաշխարհային գիմնազիադայի մասնակցության
19.08.2023 թ.-27.08.2023 թ.

Հ/Հ		Անձերի թիվը	Մեկ միավորի արժեքը (օր-դրամ)	Պատվիրակության ընդհանուր ծախսը (դրամ)	Միավորի արժեքի հիմնավորում
1	Մասնակցության գումար (գիշերավարձ, սնունդ (4 մարզաձև, 11 մարզիկ, 4 մարզիչ, 1 պատվիրակության ղեկավար, 1 թարգմանիչ))	17	11*25 800	4 824 600	Կանոնադրություն
2	ԴՀՄՖ-ի ներկայացուցիչ (գիշերավարձ, սնունդ), (Ֆեդերացիայի նախագահ)	1	11*51 600	567 600	
3	Համազգեստ (սպորտային կոստյում)	18	35 000	630 000	
4	Մարզակոշիկ	18	23 000	414 000	
5	Գլխարկ	18	6 000	108 000	
6	Երևան-Ռիո Դե Ժաներիո-Երևան ավիատոմս (կանգառներով)	18	1 100 000	19 800 000	
7	Ճանապարհի օրապահիկ (մեկնելու և վերադարձի)	18	2 (կողմ)*19 600	705 600	ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 390-Ն որոշում
8	Մշակութային երեկոյի կազմակերպում, հյուրասիրություն և նվիրատվություն (ազգային ուտեստներ և նվերներ)	-	330 000	330 000	Կանոնադրություն
9	Դեսպանատան գումար (փաստաթղթերի հավաքագրում, թարգմանություն, նոտարական հաստատում)	18	57 000	1 026 000	

10	Բարեգործական ճաշկերույթ	3	50 000	150 000	
11	Բժշկական ապահովագրություն	18	4 000	72 000	
12	Կազմակերպության անդամավճար	200 €	430	86 000	
13	Մրզավարական տուգանք	2	408 500	817 000	
14	Բանկային ծառայություն	-		59 061	
	ԸՆԴԱՄԵՆԸ			**29 589 860**	

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030971
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ՖԵԴԵՐԱՑԻԱ
«Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ

ք. Երևան, Ագաթանգեղոսի 13

«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510022842720100
ՀՎՀՀ 02700421

Նախագահ՝
_____ Ա. Մեհրաբյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
2023 թ. հուլիսի 3-ին կնքված
N **ԱԵՀԳՄ 2023** պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպություն «Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ-ի

Ծրագրի անվանումը «Դպրոցականների համաշխարհային Գիմնազիադայի մասնակցության և ՀՀ տարածքում կազմակերպման ապահովում»

№	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամ)	Փաստացի գումարը (դրամ)	Շողումը նախահաշվի համեմատ (+-դրամ)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
	Ընդամենը				

«.....» .....2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ (_____)
ստորագրություն

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ

_____ (_____)
ստորագրություն

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու

_____ (_____)
ստորագրություն